13573

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«12» 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0155-22

Ձեռնարկողը՝ ***«ԳԵՎՈՐԳ-ԱՆՈՒՇ» ՍՊԸ***
Գեղհովիտ բնակավայր, փ. 5, տ. 54

Գործունեությունը՝ ***Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար-1» տեղամասում 2022-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի՝ պարտականությունները կատարող Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0155-22

«12» 10 **2022թ.**

Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար-1» տեղամասում 2022-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԳԵՎՈՐԳ-ԱՆՈՒՇ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր

Ներածական մաս. «ԳԵՎՈՐԳ-ԱՆՈՒՇ» ՍՊԸ-ի նպատակն է Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար-1» տեղամասում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2)-րդ կետի՝ Գեղհովիտի բազալտների հանքերևակումում ուսումնասիրության աշխատանքները դասակարգվում է որպես «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել տեղամասի թարմ բազալտների պիտանելիությունը բլոկների, շինարարական խճի ու ավազի արտադրության 9479-2014 ԳՈՍՏ-ի, 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ-ի և 8736–93 ՀՍՏ ԳՈՍՏ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների արտադրությունը:

Նկարագրական մաս. Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար-1» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանում և տեղակայված է Մարտունի-Վարդենյաց լեռնանցք-Գետափ ավտոմայրուղու ձախ մասում, Գեղհովիտ գյուղից մոտ 3.0կմ դեպի հարավ-արևմուտք, իսկ Մարտունի քաղաքից 8.0կմ հեռավորության վրա 1.22հա մակերեսով տարածքում:

«Ամուրքար-1» տեղամասի տարածքը տեղակայված է 2255-2265մ բացարձակ բարձրությունների վրա:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են էոցենի նորմալ նստվածքային, տուֆանստվածքային և հրաբխային, պլիոցենի հրաբխա-նստվածքային, չորրորդականի հրաբխային ու ժամանակակից դելյուվիալ-պրոլյուվիալ առաջացումները:

Բազալտների «Ամուրքար-1» տեղամասը հարում է մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային հագեցած հողերի բնակին տիպին: Երևակման տարածքը կազմող մարգագետնատափաստանային սևահողանման հողերը ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ: Բուն ուսումնասիրվող տարածքի մակերեսը քարքարոտ է: Հողային ծածկույթը բնութագրվում է ցածր որակական հատկություններով:

«Ամուրքար-1» տեղամասի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն, սողանքային երևույթներ երևակման տարածքում չեն արձանագրվել:

Տեղամասի տարածքը զուրկ է կարմիր գրքում գրանցված կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչներից, տեղամասում կաթնասունների բներ, որջեր չեն արձանագրվել:

Գեղհովիտի բազալտների հանքավայրի տարածաշրջանը բնորոշվում է լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային բուսածածկույթով՝ տարախոտա-հացազգայինի խոտաբույսերի տարածմամբ:

Տեղամասի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով հորատման ընթացքում նախատեսվում են համապատասխան դիտարկումներ, հաշվի առնելով տեղամասի հետագա շահագործման հնարավորությունը:

Գրունտային ջրերի հայտնաբերման դեպքում նախատեսվում է կազմվել ծրագրի՝ ուսումնասիրության համար, որը իրականացվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից:

Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°03՝59.48"-հյուսիսային լայնության, 45°16՝35.39"- արևելյան երկայնության:

Ուսումնասիրվող տարածքը եզրագծվում է հետևյալ կոորդինատներով՝

1. 4436970.4 8523583.6
2. 4437047.7 8523496.7
3. 4437101.5 8523573.2
4. 4437070.6 8523646.6
5. 4436976.3 8523633.3

Տարածքի մակերեսը կազմում է 12249մ^2

Տեղամասի համար ընտրվելու է համապատասխան խտությամբ հետախուզական ցանց՝ համաձայն շինարարական ավազի, խճի և երեսապատման քարի հանքավայրերի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի ցուցումների: Ըստ վերը նշված հրահանգի տեղամասն իր երկրաբանաձևաբանական առանձնահատկություններով և երկրաբանական հայտանիշների փոփոխականությամբ վերագրվում է 1-ին խմբին:

Օտակար հանածոն ներկայացված է մերձմակերևութային, մերձհորիզոնական տեղադրմամբ շերտաձև մարմնի տեսքով:

Նախատեսվում է կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքներով և պաշարների հաշվարկմամբ կազմել երկրաբանական հաշվետվություն՝ արդյունաբերական կարգով պաշարների հաշվարկմամբ:

Հետախուզվող տեղամասում նախատեսվում է կատարել 1:500 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ 1.22հա մակերեսով տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ:

Աշխատանքները իրականացվելու են սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով:

Հորատանցքերը նախատեսվում է հորատել օգտակար հանածոյի մարմնի՝ բազալտների շերտի լրիվ հզորության որոշման և նմուշարկման համար:

Հորատումը կատարվելու է կարծր համաձուլվածքայի թագիկներով 112մմ և 93մմ տրամագծերով, ՈՒԳԲ մակնիշի ինքնագնաց հաստոցով:

Նախատեսվում է հորատել թվով 5 հորատանցք, յուրաքանչյուրը 15-ից մինչև 23մ խորությամբ(Հ-1 15.0մ, Հ-2 15.0մ, Հ-3 15.0մ, Հ-4 20.0մ և Հ-5 23.0մ), ընդամենը 88գ.մ ծավալով: Բոլոր հորատանցքերը ենթարկվելու են հանուկային նմուշարկման:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերի հորատահանուկները և փորձնական հանույթի բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների՝

- հորատհանուկի փաստագրում - 88գ.մ,
- փորձնական բացահանքի փաստագրում - 10մ:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման նպատակով նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում 10x5x3մ չափերով՝ 150մ^3 ծավալով չհողմահարված թարմ ապարներ պիտանի բլոկների ելքի որոշմամբ: Փորձնական հանույթը կկատարվի էքսկավատորով: Լրացուցիչ տարածքներ չխախտելու նպատակով փորձնական հանույթ կիրականացվի արդեն գոյություն ունեցող բացահանքից:

Թարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 35.0մ^3 ծավալով կոպտամշակված տարբեր կարգերի բլոկներ: Փորձնական սղոցում իրականացվելու է Գեղհովիտ գյուղի մոտակայքում գործող սեփական քարամշակման արտադրամասում, բլոկները քարամշակման արտադրամաս է տեղափոխվելու սեփական ավտոինքնաթափով:

Բազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսապատման և շինարարական խճի ու ավազի ստացման հումք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից և փորձնական բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահունուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ)
- անընդհատ տիրույթներով - 18 նմուշ,
- մենաքարի նմուշ բացահանքից - 1 հատ (20x20x20սմ),
- քիմիական կազմը որոշելու նպատակով - 2 նմուշ,
- քարաբանական կազմի ուսումնասիրություն - 2 նմուշ,
- համախառը նմուշ - 1 նմուշ 200կգ զանգվածով,

Ընդամենը 24 նմուշ:

Վերցված բոլոր նմուշները ենթարկվելու են համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում:

Հորատման ժամանակ նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող և դաշտամիջյան ճանապարները՝ կարգաբերելով դրանք:

Նախատեսվում է 5 հորատման հարթակների հարթեցում, միաժամանակ աղբոտումից պաշտպանելու նպատակով հողաբուսական շերտի/մոտ 0.2մ հզորությամբ/ հանում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում:

Այս աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝ 5 հորատման հարթակ, մեկ հորատման հարթակի մակերեսը կազմելու է 40մ^2, իսկ ընդհանուր մակերեսը՝ 200մ^2: Երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում ժամանակավորապես օգտագործումից դուրս եկած հողերի ընդհանուր մակերեսը կկազմի 250մ^2:

Հողօգտագործման համար վնասի փոխհատուցման գումարը համայնքին կազմելու է 62.5 հազ. դրամ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքերի իրականացման ընթացքում հնարավոր են աննշան ազդեցություններ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա: Տվյալ ազդեցությունները բնութագրվում են.

- մթնոլորտային օդ արտանետումներով՝ հորատանցքերի անցման նպատակով կիրառվող աշխատող սարքավորումներն ու ավտոտրանսպորտը կարող է դառնալ աննշան քանակությամբ վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Փոշեգոյացում հնարավոր է տեղի ունենա նաև փորձնական հանույթի բացահանքի սահմաններում:

Նախնական հաշվարկներին համաձայն, ուսումնասիրության տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները լինելու են նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտություններից զգալիորեն ցածր:

- ջրային ավազան արտանետումներով՝ հաշվի առնելով ուսումնասիրվող տեղամասի տեղանքի կտրտված ռելիեֆը և կատարվելիք ուսումնասիրության աշխատանքների բնույթը՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում, այս ամենից ելնելով կարել է փաստել որ, ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենալու:

- հողային ծածկույթի վրա բացասական ազդեցությունները կանխելու և լրացուցիչ տարածքներ չխախտելու նպատակով փորձնական բացահանքի անցման համար ընտրված է արդեն գոյություն ունեցող բացահանքի տարածքը, որտեղից նախկինում կատարված աշխատանքների ժամանակ ամբողջությամբ հեռացվել է հողային շերտը:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հողի շերտը հանում, պահեստավորում հարթակների անմիջական հարևանությամբ, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով, հանված հողը հետ փռում: Հանված հողերի պահպանման հատուկ պայմաններ չեն նախատեսվում, քանի որ յուրաքանչյուր հորատանցքի հորատումը տևելու է 2 օրից ոչ ավել, որից հետո հարթակը վերականգնվելու է,

- բուսական և կենդանական աշխարհի վրա երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի վրա գրեթե զրոյական է: Տեղամասի տարածքում բացակայում է համատարած բուսական ծածկը, չկան անտառներ՝ հետևաբար երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չեն հանգեցնի տարածքի էկոհամակարգերի վրա նշանակալից բացասական ազդեցությունների:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կառաջանան չորս տիպի թափոններ.

1. Մակաբացման ապարներ, որոնք ներկայացված են խիստ ճեղքավորված բազալտների շերտով:

Փորձնական բացահանքի անցումը թափոններ չի առաջացնելու, քանի որ մակաբացման ապարները փռվելու են անմիջապես փորվածքի հարևանությամբ, նախկինում խախտված տարածքի վրա և հարթեցվելու՝ իրականացնելով այդ տարածքների վերականգնում: Նկարագրված ապարները իներտ են, ոչ վտանգավոր, չեն ենթարկվում էական ֆիզիկական,

քիմիական կամ կենսաբանական վերափոխումների և հետևաբար շրջակա միջավայրի և մարդկանց առաղջության վրա որևէ բացասական ազդեցություն չեն ունենալու,

2. Հորատման թագիկների թափոններ, որոնք առաջանալու են հորատման ընթացքում թագագլխիկների կարծր համաձուլվածքային հատվածի մաշվելու արդյունքում:

Հորատման թագիկների թափոնները բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: Քանի որ հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, այդ իսկ պատճառով ընկերությունը հորատման թագիկների թափոնների կառավարում չի նախատեսում:

3. Նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ, որոնք օգտագործվել են փորվածքների անցման աշխատանքների տեխնոլոգիական ցիկլում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում տարածքում աշխատող տեխնիկան կլիցքավորվի մոտակա լիցքավորման կայանում, բացառելով նավթամթերքների պահեստավորում տարածքում:

Քսայուղերը դասվում են վտանգավորության 4-րդ դասին, իսկ սպառողական հատկությունները կորցրած յուղերը՝ վտանգավորության 3-րդ դասին:

4. Կենցաղային աղբ: Այս տեսակին են պատկանում թուղթը, տեքստիլը, պլաստմասսան և այլն: Տրածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի): Թափոնները կտեղափոխվեն համայնքի մոտակա աղբահավաք կետեր, որտեղից պարբերաբար կոմունալ ծառայության կողմից կտեղափոխվի շրջանի աղբավայր:

Առաջացած չտեսակավորված կենցաղային աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին:

Հաշվի առնելով այն հանգամանքը որ հորատանցքերի հորատումը և փորձնական հանույթը իրականացվելու է սեփական տեխնիկա-տրանսպորտային միջոցներով, որոնք տեղամասում կգտնվեն շատ կարճ ժամանակ, ուստի նախատեսվող ուսումնասիրության աշխատանքների ժամանակ, բացառվելու է բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) առաջացումը:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- տարածքում աշխատող տեխնիկայի լիցքավորում մոտակա լիցքավորման կայանում, բացառելով նավթամթերքների պահեստավորում տարածքում,
- դիզելային շարժիչների սպասարկման կազմակերպում տեխ. սպասարկման կայաններում,
- կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր,
- արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախի մուտքային ավտոճանապարհի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Ջուրը նախատեսվում է բերել համապատասխան ջրօգտագործման պայմանագրերի համաձայն՝ Գեղհովիտ գյուղի ջրամատակարարման ցանցերից,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով,
- անվտանգության նկատառումներից ելնելով նախատեսվում է աշխատանքների իրականացման տարածքների մեկուսացում/ցանկապատում: Հարակից համայնքների բնակիչների անվտանգության ապահովման նպատակով տեղամասի եզրագծով, մուտքային ճանապարհների մոտ՝ հորատհարթակների անմիջական հարևանությամբ զգուշացնող

02543163
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ցուցանակների տեղադրում: Փորձնական բացահանքի տարածքի ցանկապատում փշավոր մետաղալարով,

- բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,
- շրջանի կենդանական աշխարհի ներկայացուցիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների նվազեցման նպատակով նախատեսվում է սարքավորումները աշխատացնել բացառապես սարքին վիճակում՝ ապահովելով նորմատիվ փաստաթղթերով սահմանված աղմուկի նվազագույն մակարդակը,
- աշխատանքների ավարտից հետո կատարվելու է նաև խախտված տարածքների ռեկուլտիվացիա, հետ փռված ապարները փխրեցվելու են, ինչը թույլ կտա ապահովել նոսր բուսականության արագ վերարտադրությունը, և բնական լանդշաֆտային վերականգնմանը:

Տեղամասում երկրաբանական ուսումնասիրությունների ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է նաև գործողությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ, որոնցից են՝ ջրցանի ծավալների ավելացում, միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակի կրճատում, մակաբացման աշխատանքների դադարեցում: Նախատեսվում են նաև մի շարք հակահրդեհային միջոցառումներ, որոնցից կարել է նշել՝ հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում աշխատանքների տեղամասում, կրակմարիչներով ապահովում, հակահրդեհային անվտանգության պաստառների, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումների փակցնում և այլն:

Հողի վերին շերտի /հողաբուսաշերտի/ պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է հորատահարթակների կառուցման ժամանակ հողի շերտի հանում, պահեստավորում հորատահարթակի հարևանությամբ, իսկ աշխատանքների ավարտից հետո, լանդշաֆտի վերականգնման նպատակով հետ փռում և ջրում:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվում է հինգ հորատա-հարթակների 200մ^2 և փորձնական բացահանքի 50մ^2 մակերեսներից: Ռեկուլտիվացիայի համար նախատեսվող գումարը կկազմի 125 հազ. դրամ:

«Ամուրքար-1» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մի շարք մշտադիտարկումներ, որոնք են.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հետախուզական փորվածքների անցման շրջանում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ:
Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մլգ/մ^3, ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մլգ/մ^3, մրի համար՝ 0,15մլգ/մ^3:
2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ տարին մեկ անգամ հաճախականությամբ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով հայցվող տեղամասի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության փուլերում, Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի բնակավայրում անցկացված հանրային քննարկումներ ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Փորձաքննության գործընթացում հայտը ներկայացվել է Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին, համաձայն ներկայացված տեղեկատվության Գեղհովիտի բազալտի հանքավայրի առանձին տեղամասերում երկրաբանահետախուզական աշխատանքները, ընդհանուր առմամբ Սևանա լճի և Սևանի ջրհավաք ավազանի համար էական բնապահպանական ռիսկեր ունենալ չեն կարող: Սակայն լեռնարդյունաբերական գործունեության գումարային ազդեցությունը Սևանա լճի էկոհամակարգի, ջրհավաք ավազանի և լանդշաֆտի վրա կարող է հանդիսանալ էական բնապահպանական ռիսկ: Քանզի հանքավայրի հետագա շահագործման վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Սևանա լճի հանձնաժողովը չի կարող երաշխավորել դրականա եզրակացության տրամադրում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցություններ վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել որ, շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:
2. Աշխատանքների կատարման ընթացքում առաջնորդվել աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհարաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:
3. Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդ, հողային ռեսուրսներ, կենսաբազմազանության, մակերևութայի և ստորերկրյա ջրերի մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4. Անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:
5. Գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 20-րդ և «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներով:
6. Անհրաժեշտ է պարտադիր ապահովել հայտում ներկայացված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
7. Ապահովել և պահպանել բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԳԵՎՈՐԳ-ԱՆՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Ամուրքար-1» տեղամասում 2022-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Նելլի Նասիբյան